Հավելված 7
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2022 թվականի նոյեմբերի 3 -ի N 331- Լ որոշմամբ
Գործում է սկսած 2022 թվականի նոյեմբերի 14-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33 , (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

«ROCKET» ԱՆԳՐԱՎ ՎԱՐԿԵՐԻ/ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

	Ընդհանուր պայմաններ			
1.	**Վարկատեսակ**	Վարկ		Վարկային գիծ
2.	**Նպատակ**	սպառողական		
3.	**Արժույթ**	ՀՀ դրամ կամ ԱՄՆ դոլար[1]		ՀՀ դրամ
4.	**Վարկի նվազագույն գումար/սահմանաչափ**	100 000 ՀՀ դրամ կամ 200 ԱՄՆ դոլար		100 000 ՀՀ դրամ
5.	**Վարկի առավելագույն գումար/սահմանաչափ[2]**	10 000 000 ՀՀ դրամ կամ 20 000 ԱՄՆ դոլար		10 000 000 ՀՀ դրամ
6.	**Տարեկան անվանական տոկոսադրույք**	ՀՀ դրամ	19.9%-21.7%	19%-21% ՀՀ դրամ
		ԱՄՆ դոլար	16.9%-18.9%	
7.	**Տարեկան փաստացի տոկոսադրույք[3]**	ՀՀ դրամ	21.82% -23.99%	20.89%-23.34% ՀՀ դրամ
		ԱՄՆ դոլար	18.54%-21.86%	
8.	**Նվազագույն ժամկետ**	12 ամիս		18 ամիս
9.	**Առավելագույն ժամկետ**	60 ամիս		36 ամիս
10.	**Վարկի/վարկային գծի տրամադրման եղանակ[4]**	անկանխիկ՝ ընթացիկ հաշվի միջոցով		անկանխիկ՝ վճարային քարտի միջոցով
11.	**Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ**	ամսական հավասարաչափ մասերով (անուիտետային)		

[1] ԱՄՆ դոլարով վարկերը տրամադրվում են միայն դիմումը Բանկի մասնաճյուղերում ներկայացնելու դեպքում
[2] Վարկի առավելագույն գումարը, ժամկետը և տարեկան տոկոսադրույքը որոշվում են համաձայն հաճախորդի վարկարժանության գնահատականի
[3] ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

[4] ԱՄՆ դոլարով վարկերը տրամադրվում են անկանխիկ՝ վճարային քարտի միջոցով

12.	**Վարկային գծի չօգտագործված միջոցների դիմաց տոկոս**	չի հաշվարկվում
13.	**Վարկային գծի մարման ամսական նվազագույն չափ**	10%
14.	**Վարկային գծի մարման արտոնյալ ժամանակահատված**	45 օր նախորդ ամսվա ընթացքում վարկային գծի անկանխիկ օգտագործված գումարների նկատմամբ *(բացառությամբ քարտից քարտ փոխանցումների, ներբանկային և միջբանկային փոխանցումները ՀՀ տարածքում և սեփական հաշիվների միջև)* տոկոսներ չեն հաշվարկվում, եթե հաճախորդը վերը նշված եղանակով վարկային գծի օգտագործված մասի մարումը կատարում է մինչև ընթացիկ ամսվա 15-ը
15.	**Վարկային գծի և տոկոսագումարների մարման եղանակ**	ամենամսյա պարտադիր մուտք քարտային հաշվին նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ օգտագործված գումարի՝ 14-րդ կետում նշված %-ի և կուտակված տոկոսագումարների հանրագումարի չափով՝ մինչև ընթացիկ ամսվա 15-ը, իսկ վարկային գծի մարումը՝ ժամկետի վերջում
16.	**Ապահովվածություն**	1) վարկարժանության գնահատական 2) դրամական հոսքեր 3) անհրաժեշտության դեպքում ֆիզիկական անձի երաշխավորություն
17.	**«Վարկային դադար» ծրագրին միանալու հնարավորություն**	«Վարկային դադար» ծրագիրը հնարավորություն է տալիս հաճախորդին իր ցանկությամբ հետաձգել (բաց թողնել) վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հերթական վճարումը տարին մեկ անգամ, սակայն ոչ ավել, քան երեք անգամ վարկի գործողության ողջ ընթացքում «Վարկային դադար» ծրագրին միանալու վճար՝ վարկի մայր գումարի մնացորդի 0.1%, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ: Ծրագրին հնարավոր է միանալ միայն վարկի գործողության ընթացքում: **«Վարկային դադար» ծրագրի օգտագործման հետ կապված գործում են հետևյալ սահմանափակումները.** • Ծրագրից կարող են օգտվել այն վարկառուները, ում վարկը Բանկում սպասարկվել է առնվազն վեց ամիս, • Ծրագրից հնարավոր չէ օգտվել վարկային պայմանագրով սահմանված վարկի ժամկետի վերջին ամսում, • Ծրագրից օգտվելու դեպքում հետաձգվող գումարը (վարկի գումար + տոկոսագումար + այլ վճարներ) բաշխվում է վարկի մնացած ժամկետի վրա: • Վարկի գործողության ընթացքում ծրագրին միանալու դեպքում վարկառուները կարող են ծրագրից օգտվել Բանկի կողմից ծրագրին միանալու առաջարկը ստանալուց հետո առնվազն երկու ամիս անց՝ բավարարելով սույն կետում նշված պահանջներին

		«Վարկային դադար» ծրագրից օգտվող վարկառուների վարկային պատմությանը ներկայացվում են հետևյալ պահանջները. 1) Ծրագրից օգտվելու դիմումի ներկայացման պահին վարկառուն չպետք է ունենա գործող ժամկետանց և ստանդարտ դասից տարբերվող դասակարգում ունեցող վարկային պարտավորություններ (վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ, տրված երաշխավորություն և այլն), 2) Ծրագրից օգտվելու դիմումի ներկայացման օրվան նախորդող 12 ամսվա ընթացքում վարկառուն չպետք է ունենա ժամկետանց վարկային պարտավորությունների գծով հանրագումարային 30 օրը գերազանցող, իսկ հաջորդական՝ 15 օրը գերազանցող ուշացում:
Միջնորդավճարներ		
18.	**Վարկային հայտի ուսումնասիրության վճար**	չի սահմանվում
19.	**Վարկի/վարկային գծի տրամադրման միանվագ միջնորդավճար**	չի սահմանվում
20.	**Վարկային հաշվի սպասարկման վճար**	չի սահմանվում
21.	**Ընթացիկ հաշվի բացման վճար**	անվճար
22.	**Վարկի/վարկային գծի գումարի կանխիկացման վճար**	համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված կանխիկացման սակագների
23.	**Վարկային գծի ժամկետի երկարաձգում**	1. Վարկային գծի ժամկետը կարող է երկարաձգվել Բանկի կողմից, վարկի ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ Բանկում գործող տվյալ վարկատեսակի տեղեկատվական ամփոփագրով նախատեսված վարկավորման պայմաններով, Բանկի ներքին գնահատմամբ 2. Հաճախորդի վարկային գիծը կարող է երկարաձգվել որպես վարկ՝ սահմանելով մարման հավասարաչափ ռեժիմ (անուիտետային մարում), Բանկի ներքին գնահատմամբ
24.	**Ապահովագրություն**	չի պահանջվում
25.	**Վճարային քարտի սակագներ**	➢ **ArCa Classic**, որի դեպքում տարեկան սպասարկման վճար չի սահմանվում, իսկ մնացած սակագները՝ համաձայն Բանկի գործող սակագների՝ **ArCa Classic քարտի տեղեկատվական ամփոփագիր** ➢ **Idram Rocket Visa** քոբրենդային քարտ՝ համաձայն գործող սակագների՝ հետևյալ հղմամբ՝ **Idram Rocket VISA Տեղեկատվական ամփոփագիր** ➢ **Visa Digital** թվային վճարային քարտ՝ համաձայն գործող սակագների՝ հետևյալ հղմամբ՝ Visa Digital Տեղեկատվական ամփոփագիր
Վարկառուի/երաշխավորի նկատմամբ պահանջներ		
26.	**Կարգավիճակ**	ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ

27.	**Տարիքային սահմանափակում**	վարկառուի տարիքը վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ չպետք է 21 տարեկանից ցածր լինի և մինչև վարկի մարման վերջնաժամկետը չպետք է գերազանցի 65 տարեկանը
28.	**Վարկային պատմության նկատմամբ պահանջ**	1. հաճախորդը պետք է ունենա դրական վարկային պատմություն կամ 2. վարկի տրամադրմանը նախորդող առնվազն վեց ամսվա ընթացքում հաճախորդը պետք է լինի գրանցված աշխատող, եթե վերջինս չունի վարկային պատմություն 3. հաճախորդը չպետք է ներառված լինի Բանկի անցանկալի հաճախորդների ցանկում[5]:
Տույժեր, տուգանքներ		
29.	**Ժամկետանց վարկի գծով, օրական**	0.1%
30.	**Ժամկետանց տոկոսագումարի գծով, օրական**	0.1%
31.	**Վարկի վաղաժամկետ մարման համար**	չի սահմանվում
32.	**Վարկի վաղաժամկետ մարում պահանջելու հիմքեր**	Բանկն իրավասու է պահանջել վարկի վաղաժամկետ մարում, եթե 1) վարկի ստացման համար ներկայացված տեղեկությունները կեղծ կամ անարժանահավատ են 2) չի կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները, 3) այլ հիմքեր՝ համաձայն պայմանագրի 4) հաճախորդը հրաժարվում է վճարային քարտից (ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում)
Հայտի վերաբերյալ այլ պայմաններ		
33.	**Վարկի տրամադրման դրական գործոններ**	1) դրական վարկային պատմություն 2) վարկարժանության դրական գնահատական 3) բավարար դրամական հոսքեր
34.	**Վարկի մերժման գործոններ**	1) բացասական վարկային պատմություն 2) վարկարժանության բացասական գնահատական 3) անբավարար դրամական հոսքեր 4) կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում 5) այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը 6) հաճախորդի էլեկտրոնային փոստի բացակայությունը 7) այլ գործոններ
35.	**Վարկի դիմումի ընդունման, ձևակերպման և տրամադրման վայր**	➢ **IDBanking.am** առցանց համակարգ և Idram&IDBank բջջային հավելված ➢ Բանկի բոլոր մասնաճյուղեր

[5] Բանկի անցանկալի հաճախորդ դասակարգելու վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են «Բանկի կողմից հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և նրանց հետ հարաբերությունների կառավարման վերաբերյալ» ընթացակարգով- https://idbank.am/information/helpfull-information/Classification_procedure.pdf

36.	**Որոշման կայացման առավելագույն ժամկետ**	➢ մինչև 5 րոպե՝ առցանց համակարգերով դիմելու դեպքում ➢ մինչև 1 աշխատանքային օր՝ դիմումը Բանկի մասնաճյուղում ներկայացնելու դեպքում	
37.	**Վարկառուին վարկի վերաբերյալ կայացված որոշման մասին տեղեկատվության տրամադրման ժամկետ**	➢ մինչև 5 րոպե՝ առցանց համակարգերով դիմելու դեպքում ➢ մինչև 1 աշխատանքային օր՝ դիմումը Բանկի մասնաճյուղում ներկայացնելու դեպքում Բանկը վարկի տրամադրման վերաբերյալ կայացրած որոշման մասին հաճախորդին կարող է տեղեկացնել Բանկի տարածքում, հեռախոսազանգի կամ էլեկտրոնային փոստի միջոցով	
38.	**Որոշման վավերականության առավելագույն ժամկետ**	➢ առավելագույնը 5 րոպե առցանց համակարգերով դիմելու դեպքում ➢ մինչև 5 աշխատանքային օր դիմումը Բանկի մասնաճյուղում ներկայացնելու դեպքում	➢ առավելագույնը 5 րոպե առցանց համակարգերով դիմելու դեպքում ➢ մինչև 15 աշխատանքային օր դիմումը Բանկի մասնաճյուղում ներկայացնելու դեպքում[6]
Հաճախորդի կողմից Բանկին տրամադրվող փաստաթղթեր (տեղեկատվություն)			
1.	Հաճախորդի անձը հաստատող փաստաթուղթ (տվյալներ)		
2.	Սոցիալական քարտ/հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք		
3.	Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցե		

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկը, նախքան վարկային պայմանագրի կնքումը, հաճախորդին տրամադրում է վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված են հաճախորդին տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:

2. Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան:

3. Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները:

4. Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

[6] 15 աշխատանքային օրվա ընթացքում վարկային գիծը չձևակերպելու/չտրամադրելու դեպքում թույլատրվում է առավելագույնը մինչև հաջորդող 3-րդ աշխատանքային օրը իրականացնել հաճախորդի լրացուցիչ ԱՔՌԱ հարցում (առանց հաճախորդի կողմից նոր դիմում և/կամ ԱՔՌԱ հարցում անելու համաձայնություն պահանջելու) և նորից հաստատել՝ վերահաստատել վարկային գիծը, եթե հաճախորդը տվյալ պահին չունի ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ: Արգելվում է մեկից ավել վերահաստատումը:

5. Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:

6. Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

7. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց:

8. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդը իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:

9. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:

10. Հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում հաճախորդի այլ գույքի հաշվին:

11. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձմանն ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:

12. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70-11-11, ֆաքս՝ (+37410) 58 24 21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

13. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

14. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

15. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

16. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղմամբ՝ Սակագներ:

17. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:

18. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի և Idram&IDBank բջջային հավելվածի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ